# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<05>> հունիսի 2014թ.                                                                  N 112

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի երրորդ մասով, $244^9$-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի 2014 թվականի մայիսի 5-ի թիվ ՍՄ/2719-14 գրությունը.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղական համայնքի ղեկավարին հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար ենթարկել վարչական պատասխանատվության նվազագույն աշխատավարձի հարյուրիհիսնապատիկի չափով՝ մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված տուգանքները վճարել տասնհինգօրյա ժամկետում պետական բյուջեի N 900005243119 հաշվեհամարին և մուծված անդորրագրերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝                                                                  Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ